ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

30.06.2025Թ. ՆԻՍՏԻ

ՀՀ, ք.Երեւան

2025 թվականի հունիսի 30-ին տեղի ունեցավ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) հրապարակային նիստը: Նիստին մասնակցում էին Հանձնաժողովի անդամներ՝ Արմեն Մարուխյանը, Մարիամ Գալստյանը, Լիլիթ Ալեքսանյանը:

Համաձայն «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 21-րդ հոդվածի 5-րդ մասի՝ նիստն իրավազոր էր, քանի որ դրան ներկա էին Հանձնաժողովի առնվազն երեք անդամ:

Նիստը նախագահող Մարիամ Գալստյանը ներկայացրեց նիստի օրակարգը, որը հաստատվեց միաձայն:

ՕՐԱԿԱՐԳ

1. 2025 թվականի մշտադիտարկման արդյունքների ներկայացում (25 անձի վերաբերյալ),
2. Մեդիա հրապարակման հիման վրա պաշտոնատար անձանց՝ շահերի բախման,վարքագծի առերևույթ խախտման և այլ սահմանափակումների վերաբերյալ իրականացված ուսումնասիրության ներկայացում,
3. Կոռուպցիայի Կանխարգելման Հանձնաժողովի՝ 2020 թվականի նոյեմբերի 12-Ի N 04-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություն կատարելու մասին որոշման ընդունման վերաբերյալ քննարկում:

Օրակարգի առաջին հարցը ներկայացրեց հանրային ծառայողների վարքագծի վերահսկողության վարչության պետ Տիգրանուհի Խալաֆյանը: Մշտադիտարկման շրջանակներում կատարվել է թվով 30 պաշտոնատար անձի վերաբերյալ ուսումնասիրություն և յուրաքանչյուր պաշտոնատար անձի նկատմամբ կատարված ուսումնասիրության արդյունքները ներկայացվեց Հանձնաժողովին: Հանձնաժողովը որոշեց փուլային տարբերակով, հաջորդող նիստերի ընթացքում ներկայացնել մշտադիտարկման շրջանակներում մյուս պաշտոնատար անձանց վերաբերյալ ուսումնասիրության արդյունքները:

Օրակարգի երկրորդ հարցի շրջանակներում Տ. Խալաֆյանը ներկայացրեց Գյումրու համայնքի ղեկավար Վարդան Ղուկասյանի վերաբերյալ իրականացված ուսումնասիրության արդյունքները: Ուսումնասիրության շրջանակներում հայտնաբերվել է երկու խախտում, որոնց վերաբերյալ Հանձնաժողովը որոշեց վարույթների և իրավական ապահովման վարչությանը հանձնարարել՝ ուսումնասիրել գործի իրավական հիմքերը և դրանց առկայության պարագայում կազմել վարույթի հարուցման որոշման նախագիծ:

Տ. Խալաֆյանը ներկայացրեց Նոյեմբերյան համայնքի ղեկավար Արսեն Աղաբաբյանի վերաբերյալ իրականացված ուսումնասիրության արդյունքները, որի շրջանակներում արձանագրվել էր երկու խնդիր, առաջին խնդրի (Ա. Աղաբաբյանի փոխկապակցված անձի ընկերության և համայնքի միջև կնքված պայմանագրի վերաբերյալ) անչությամբ Հանձնաժողովը որոշեց վարույթների և իրավական ապահովման վարչությանը հանձնարարել՝ ուսումնասիրել գործի իրավական հիմքերը և դրանց առկայության պարագայում կազմել վարույթի հարուցման որոշման նախագիծ: Երկրորդ հարցի շրջանակներում Հանձնաժողովը որոշեց Ա. Աղաբաբյանից պահանջել Համայնքի որոշումները՝ «Ապրելու երկիր» կուսակցության և «Ապրելու» բարեգործական հիմնադրամին համայնքային միջոցներից կատարված փոխանցումների վերաբերյալ և արդյունքները ներկայացնել Հանձնաժողովին քննարկման հավելյալ:

Տ. Խալաֆյանը ներկայացրեց Վանաձորի համայնքի ղեկավար Արկադի Փելեշյանի վերաբերյալ իրականացված ուսումնասիրության արդյունքները, որի շրջանակներում՝ հաշվի առնելով առերևույթ խախտման հիմքերի բացակայությունը, Հանձնաժողովը որոշեց ավարտել ուսումնասիրությունը:

Տ. Խալաֆյանը ներկայացրեց Աշտարակ համայնքի ղեկավար Թովմաս Շահվերդյանի վերաբերյալ իրականացված ուսումնասիրության արդյունքները, որի շրջանակներում Հանձնաժողովը որոշեց վարույթների և իրավական ապահովման վարչությանը հանձնարարել՝ ուսումնասիրել գործի իրավական հիմքերը և դրանց առկայության պարագայում կազմել վարույթի հարուցման որոշման նախագիծ:

Հանրային ծառայողների վարքագծի վերահսկողության վարչության փորձագետ Հեղինե Ենգոյանը ներկայացրեց Երևանի քաղաքապետ Տիգրան Ավինյանի կողմից Երևանի ավագանու նիստի ընթացքում ենթադրյալ խտրական բնույթի արտահայտություն («*մարդիկ էդքան, կներեք, բայց փափախով քուրդ չեն*») կատարելու վերաբերյալ իրականացված ուսումնասիրության արդյունքները, որի շրջանակներում Հանձնաժողովը որոշեց վարույթ չհարուցել՝ հաշվի առնելով, որ դեպքի վերաբերյալ առերևույթ խախտում չի արձանագրվել:

Հ. Ենգոյանը ներկայացրեց ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի կողմից Ազգային ժողովի՝ սույն թվականի մարտի 26-ի նիստի ընթացքում ենթադրյալ սպառնալիքներ և վիրավորական արտահայտություններ (*«արա», «վեր ընկեք տեղներդ, ձեններդ կտրեք», «ձեզ էդ պատերով կտամ», «ձեր քաղաքական դիակի մնացորդները դուրս կհանեմ»,*

«ձեզ ոտի տակ կտամ, ոչ թե ձեզ հետ կբանավիճեմ», «դուրսպրծուկ», «շատ արագ հայտնվի (...) ասֆալտին») հնչեցնելու վերաբերյալ իրականացված ուսումնասիրության արդյունքները, որի շրջանակներում Հանձնաժողովը որոշեց վարույթ չհարուցել՝ հաշվի առնելով, որ դեպքի վերաբերյալ առերևույթ խախտում չի արձանագրվել:

Հ. Ենգոյանը ներկայացրեց Ազգային ժողովի պատգամավորի օգնական Արթուր Սուքոյանի վերաբերյալ իրականացված ուսումնասիրության արդյունքները, որի շրջանակներում Հանձնաժողովը որոշեց, որ թեև Ա.Սուքոյանը թույլ է տվել վարքագծի կանոնի առերևույթ խախտումներ՝ երկու դրվագով, Հանձնաժողովն իրավասու չէ վերջինիս նկատմամբ սեփական նախաձեռնությամբ վարույթ հարուցել՝ պայմանավորված «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 27-րդ հոդվածի 4-րդ մասի դրույթներով: Միաժամանակ, որոշվեց շարունակել մշտադիտարկել վերջինիս վերաբերյալ հրապարակումները՝ համակարգային բնույթի խախտման առկայության դեպքում վարույթի հարուցման հարցը քննարկելու նպատակով:

Օրակարգի երրորդ հարցը ներկայացրեց Հայտարարագրերի վերլուծության վարչության պետ Տիգրան Ծատուրյանը, որի շրջանակներում ներկայացվեց «Կոռուպցիայի Կանխարգելման Հանձնաժողովի՝ 2020 թվականի նոյեմբերի 12-Ի N 04-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություն կատարելու մասին որոշման» նախագիծը, որը հաստատվեց Հանձնաժողովի կողմից:

Օրակարգում ներառված հարցերի քննարկման արդյունքներով, Հանձնաժողովը՝

ՈՐՈՇԵՑ

1. Հաջորդող նիստերի ընթացքում ներկայացնել մշտադիտարկման շրջանակներում մյուս պաշտոնատար անձանց վերաբերյալ ուսումնասիրության արդյունքները:
2. Գյումրու համայնքի ղեկավար Վարդան Ղուկասյանի վերաբերյալ՝ վարույթների և իրավական ապահովման վարչությանը հանձնարարել՝ ուսումնասիրել գործի իրավական հիմքերը և դրանց առկայության պարագայում կազմել վարույթի հարուցման որոշման նախագիծ:
3. Նոյեմբերյան համայնքի ղեկավար Արսեն Աղաբաբյանի վերաբերյալ՝ վարույթների և իրավական ապահովման վարչությանը հանձնարարել՝ ուսումնասիրել գործի իրավական հիմքերը և դրանց առկայության պարագայում կազմել վարույթի հարուցման որոշման նախագիծ, ինչպես նաև՝ հարցում իրականացնել՝ պահանջելով «Ապրելու երկիր» կուսակցության և «Ապրելու» հիմնադրամին համայնքային միջոցներից կատարված փոխանցումների վերաբերյալ և արդյունքները քննարկել հավելյալ:
4. Վանաձորի համայնքի ղեկավար Արկադի Փելեշյանի վերաբերյալ ուսումնասիրությունն ավարտել:

5. Աշտարակ համայնքի ղեկավար Թովմաս Շահվերդյանի վերաբերյալ՝ վարույթների և իրավական ապահովման վարչությանը հանձնարարել՝ ուսումնասիրել գործի իրավական հիմքերը և դրանց առկայության պարագայում կազմել վարույթի հարուցման որոշման նախագիծ:

6. Երևանի քաղաքապետ Տիգրան Ավինյանի նկատմամբ վարույթ չհարուցել՝ հաշվի առնելով, որ դեպքի վերաբերյալ առերևույթ խախտում չի արձանագրվել:

7. ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի նկատմամբ վարույթ չհարուցել՝ հաշվի առնելով, որ դեպքի վերաբերյալ առերևույթ խախտում չի արձանագրվել

8. Ազգային ժողովի պատգամավորի օգնական Արթուր Սուքոյանի վերաբերյալ՝ սեփական նախաձեռնությամբ վարույթ չհարուցել, միաժամանակ, շարունակել մշտադիտարկել վերջինիս վերաբերյալ հրապարակումները՝ համակարգային բնույթի խախտման առկայության դեպքում վարույթի հարուցման հարցը քննարկելու նպատակով:

9. «Կոռուպցիայի Կանխարգելման Հանձնաժողովի՝ 2020 թվականի նոյեմբերի 12-Ի N 04-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություն կատարելու մասին որոշման» նախագիծը հաստատել:

Նիստի օրակարգում ընդգրկված հարցերի սպառման հիմքով՝ նիստը համարվեց ավարտված:

ՆԻՍՏԸ ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ **ՄԱՐԻԱՄ ԳԱԼՍՏՅԱՆ**

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄ՝ **ԱՐՄԵՆ ՄԱՐՈՒԽՅԱՆ**

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄ՝ **ԼԻԼԻԹ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ**